են Երեւանում – ազատ միջավայր, այսինքն խօսքի ազատութիւն, եւ հանդուրժող ոգի իշխանաւորների մէջ:

Եթէ «*Կրոկոդիլ*»–ը Մոսկւայում, կամ «*Նեանգի*»–ն Թիֆլիսում որոշ յաջողութիւն ունեն, գլխաւոր պատճառը այն է, որ ռուս ու վրացի բոլշեւիկները մտքով աւելի բարձր են ու աւելի լայնսիրտ, քան երեւանցիները:

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ

Հայպետհրատը ձեռնարկել է «*Սասունցի Դաւիթ*» երկհատոր մեծ ժողովածուի հրատարակութեան: Ժողովածուի մէջ մտնելու է ժողովրդական վէպի մօտ 60 տարբերակ (վարիանտ): Առաջին հատորը բաղկանալու է մօտ 1000 էջից եւ ընդգրկելու է 40 տարբերակ, որոնցից շատերը գրի են առնւած վերջին տարիները եւ լոյս են տեսնելու առաջին անգամ: Բոլոր տարբերակներին կցւած են յառաջաբաններ եւ ծանօթութիւններ: Ժողովածուն խմբագրել եւ տպագրութեան պատրաստել է պրոֆ. Ման. Աբեղեանը: Արտաքին ձեւաւորումն ու պատկերազարդումը կատարել է նկարիչ Յակ. Կօջոյեանը:

## «ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒ

Յունւարին լրանում է Վահ. Տէրեանի ծննդեան յիսնամեակը եւ մահւան 15 ամեակը: Այդ առթիւ Երեւանում պատրաստւում է մի ժողովածու, որ նոր նիւթեր է բովանդակելու բանաստեղծի կեանքի եւ ստեղծագործութեան մասին: Ի միջի այլոց, պատրաստւած են «Էջեր Վ. Տէրեանի յեղափոխական գործունէութիւնից»՝ Մոսկւայի դիւանական վաւերագրերի հիման վրա: Ժողովածուի մէջ մտնելու են Ն. Մառի մէկ յօդւածը՝ «Իմ ուսանող Վահան Տէրեանի մասին», պրոֆ. Ի. Օրբելու յիշողութիւնները, Վ. Վահանեանի գրի առած տեղեկութիւնները Վ. Տէրեանի գործունէութեան մասին հոկտեմբերեան յեղաշրջման օրերին Պետրոգրադում եւ Մոսկւայում, Ա. Շահիջանեան – Տէրեանի գրութիւնը՝ «Տէրեանի վերջին ուղեւորութիւնը», Բանաստեղծի աւագ եղբայր Ջաւախեցու յուշերը եւայլն: Բովանդակութիւնից դատելով՝ ժողովածուն պէտք է լինի հետաքրքրական, նոր տեսալներով հարուստ վաղամեռ բանաստեղծի կեանքի եւ ստեղծագործութեան լուսաբանութեան համար:

## ՄԵԼՔՈՆԵԱՆ ՖՈՆԴ

Մելքոնեան Ֆոնդի 1935 թ. հրատարակութիւնների համար նախատեսւած է 125,000 ռուբլի: Արդէն տպագրութեան է յանձնւած 10 հատոր գիրք, որոնց թւում՝ *Յակոբեանի* «Ուղեգրութեան» 2րդ հատորը, *Ե. Շահազիզի* «Խաչ. Աբովեանի Դիւանը», *Յ. Մանանդեանի* «Հայաստանի հին ճարտարապետները», *Խ. Սամուէլեանի* «Հին Հայաստանի կուլտուրան», 3–րդ հատոր, *պրոֆ. Ջավախիշվիլու* «Նիւթեր Հայաստանի Սոցիալական Պատմութեան վերաբերեալ», *պրոֆ. Յ. Օրբելու* « Հայաստանի Արւեստի պատմութիւնը», *Դ. Սիմոնեանի* «Միք. Նալբանդեան» եւայլն: Տպագրւած պատրաստ են եւ շուտով լոյս կը տեսնեն *պրոֆ. Մելիքսէթ Բէկի* «Վրաց աղբիւրները հայերի եւ Հայաստանի մասին», *Գ. Լեւոնեանի* «Հայաստանի Պարբերական մամուլն սկզբից մինչեւ այժմ», հանգուցեալ *Սպ. Մելիքեանի* «Հայաստանի երաժշտութեան պատմութիւնը», *Աշխ. Քալանթարի* «Վաղարշապատի պեղումները», *Հր. Աճառեանի* «Արմատական Բառարանի յաւելւածը» եւայլն:

## ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Բուքրէշում կազմւած է հրատարակչական անանուն մի ընկերութիւն –«Մասիս» – 500,000 լէյ դրամագլխով: Ընկերութեան նպատակն է հրատարակել հայերէն լեզւով գրքեր կամ օտար լեզուներով հայերի մասին աշխատու-